

ռազմավարական նշանակության պարենամթերքների պակասը ներկրումների միջոցով լրացնելու երկարաժամկետ քաղաքականությունը:

Ներկայումս հիմնախնդիր է հանդիսանում ՀՀ ագրարային ոլորտի սուբսիդավորման արդյունավետության գնահատումը: Սուբսիդավորման արդյունավետության գնահատման անհրաժեշտ է ցուցաբերել համալիր մոտեցում, կիրառելով ոչ թե տնտեսական մեկ ինտեգրալային ցուցանիշ, այլ ցուցանիշների համակարգ, ընդգրկելով այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են սուբսիդավորման ուղղակի տնտեսական արդյունքները, դրանց ուղեկցող բնապահպանական և սոցիալական հետևանքները:

Այսպես, կատարված ուսումնասիրություններից բացահայտվեց գյուղատնտեսության ոլորտի կարևորությամբ և առանձնահատկություններով պայմանավորված ճյուղի սուբսիդավորման անհրաժեշտությունը, որի իրականացման արդյունավետությունը պայմանավորված է այդ բնագավառում հիմնավորված քաղաքականության լիարժեք իրականացմամբ: Գյուղատնտեսության բնագավառում սուբսիդավորման քաղաքականության իրականացումը պահանջում է նախկինում իրականացված ծրագրերի արդյունավետության իրատեսական գնահատում, ծառայած խնդիրների բացահայտում, սուբսիդավորման իրականացման օպտիմալ սահմանների տնտեսագիտական հիմնավորում և տարածաշրջանային զարգացման առաջնահերթությունների իրագործում:

ՀՐԱՉՅԱ ԾՊՆԵՅՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի առաջատար գիտաշխատող, տ.գ.դ.*

ՎԱՐԴԱՆ ԻՎԱՆՅԱՆ

*Հայաստանի պետական
ագրարային համալսարանի հայցորդ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՇՏԱՅԻՆ ԿԵՐԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՍՏԵՂԾՎԱԾ ՎԻՃԱԿՆ ՈՒ ԱՐԳՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՉՐԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Կերի կայուն բազայի ստեղծումը հանդիսանում է անասնաբուծության զարգացման կարևորագույն պայմանը: Գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունն ուղիղ կապի մեջ է գտնվում կենդանիների կերակրման հետ: Կերային հաշվեկշռի ոչ ճիշտ կառուցվածքը, կերի բարձր ինքնարժեքը հանդիսանում է անասնաբուծության ցածր արդյունավետության հիմնական պատճառներից մեկը:

Կերարտադրության հիմնական աղբյուրը դաշտային կերարտադրությունն է: Կերային մշակաբույսերին, վերջին տարիների տվյալներով, բաժին է ընկնում հանրապետության ցանքատարածությունների ավելի քան 20 տոկոսը: Դաշտային կերարտադրության յուրաքանչյուր հեկտարից հնարավոր է ստանալ 6.5 անգամ ավելի շատ կերային միավորներ, քան բնական կերային տարածություններից¹:

Դաշտային կերարտադրության մեջ մշակվող կերային կուլտուրաները բազմազան են, որոնք իրարից տարբերվում են հիմնականում սննդանյութերի պարունակությամբ, հյութալիությամբ, մարսելիությամբ: Դաշտային կերային կուլտուրաներից առավել կարևոր նշանակություն ունեն հատիկակերային կուլտուրաները, բազմամյա բակլազգի խոտաբույսերը, միամյա խոտաբույսերը, սիլոսային կուլտուրաները, կերի արմատապտուղները և այլն:

Հողի, անասնազվաքանակի, գյուղատնտեսական տեխնիկայի և այլ արտադրական միջոցների մասնավորեցումից հետո ձևավորված բազմահազար գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը, մասնատվածությունը, փոխառու միջոցների սղությունը և դրանց


¹ Ա.Ա. Թովմասյան, Դաշտային կերարտադրություն: «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1978, էջ 10:

համալրման դժվարությունները, նախկին տնտեսական կապերի խզումը, բնակչության վճարունակ պահանջարկի անկումը, անասնազիխաքանակի և դրա կառուցվածքի փոփոխությունը և մի շարք այլ գործոններով պայմանավորված՝ վերջին երկու տասնամյակի ընթացքում տեղի են ունեցել դաշտային կերարտադրության ծավալների և դրանց որակական կազմի կտրուկ փոփոխություններ, որի հետևանքով անասնազիխաքանակի կրճատումը շրջայաքար հանգեցրել է նաև անասնապահական մթերքների, հումքի և վերջիններիս վերամշակումից ստացվող սննդամթերքի արտադրության ծավալների կրճատմանը: Համեմատության համար հարկ է նշել, որ կերային մշակաբույսերի տարածությունները 1990թ. կազմել են 251.3 հազ. հա, իսկ 2011 թվականի տվյալներով, աստիճանաբար կրճատվելով՝ նվազել են 3.8 անգամ և կազմել ընդամենը 66.0 հազ. հա¹:

Կերային մշակաբույսերի և նրա հիմնական տեսակների ցանքատարածությունների 1990-2011 թվականների վերաբերյալ տվյալները ներկայացվում են 1-ին գծապատկերում.

Գծապատկեր 1

Ընդամենը կերային մշակաբույսերի, ընթացիկ և նախորդ տարիների բազմամյա խտտաբույսերի, միամյա խտտաբույսերի, կերի արմատապտուղների, սիլոսի, կանաչ կերի և սենածի համար եգիպտացորենի ցանքատարածությունների փոփոխությունը 1990-2011 թթ.²



Ներկայացված տվյալներից երևում է, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում առավել կրճատվել են միամյա խտտաբույսերի (6.7 անգամ), կերի արմատապտուղի (4.9 անգամ), եգիպտացորենի (58.1 անգամ) ցանքատարածությունները: Քանակական փոփոխությունների հետ մեկտեղ տեղի են ունեցել որակական փոփոխություններ: Կերային մշակաբույսերի կառուցվածքի փոփոխության մասին պատկերացում են տալիս 1-ին աղյուսակի տվյալները.

¹ 2011 թվականի բերքի տակ կատարված ցանքատարածությունների համատարած հաշվառման հանրագումարը: ՀՀ ԱՎԾ, Երևան-10, էջ 8:
² 1990թ. և 1991թ. գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածության և ստացված համախառն բերքի մասին ամփոփ տվյալներ, ՀՀ վիճակետվարչության գլխավոր հաշվողական կենտրոն, Երևան, 1992, էջ 2-4: Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները և համախառն բերքը 2006; 2007, 2008, 2009 և 2010 թվականներին, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2007, 2008, 2009, 2010 և 2011 թթ., էջ 6-7:


ՀՀ-ում կերային մշակաբույսերի կառուցվածքի փոփոխությունը 1990-2011թթ.

Մշակաբույսերը	1990թ.	1991թ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.
	տես. կշիռը, %	տես. կշիռը, %	տես. կշիռը, %	տես. կշիռը, %	տես. կշիռը, %	տես. կշիռը, %	տես. կշիռը, %	տես. կշիռը, %
Կերի արմատապտուղ	1.02	0.48	0.50	0.75	0.72	0.62	0.57	0.79
Եգիպտացորեն սիլոսի, կանաչ կերի և սենածի համար	9.39	7.15	1.04	0.79	0.41	0.68	0.47	0.62
Սիլոսային այլ մշակաբույսեր	6.72	5.12	0.17	0.02	0.00	0.01	0.03	0.12
Միամյա խոտաբույսեր	27.91	29.28	15.52	12.78	11.74	12.88	12.09	15.82
Բազմամյա անծածկույթ խոտաբույսերի ընթացիկ տարվա ցանք	1.62	1.70	6.31	6.96	7.45	4.82	5.39	4.47
Բազմամյա խոտաբույսերի անցյալ տարիների ցանք	53.35	56.27	76.47	78.70	79.67	80.99	81.45	78.18
Ընդամենը կերային մշակաբույսեր	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Ներկայացված տվյալներից երևում է, որ կերային մշակաբույսերը որակական առումով զգալի փոփոխություններ են կրել: Դրանք հատկապես վերաբերում են սիլոսային մշակաբույսերին, այսպես՝ եթե 1990-1991թթ. դրանց տեսակարար կշիռը համապատասխանաբար կազմել է 16.11 և 12.27 տոկոս, ապա այն 2006-2011 թվականների միջին տվյալներով կազմել է 0.73 տոկոս: Ընդհանուր վերցրած կրճատվել է միամյա խոտաբույսերի տեսակարար կշիռը, որը 2011 թվականի տվյալներով կազմել է 15.82 տոկոս, դրա փոխարեն ավելացել է բազմամյա խոտաբույսերի անցյալ տարիների ցանքը, այն 1991 թվականի 56.27 տոկոսի դիմաց հասել է 78.18 տոկոսի: Վերջինս վկայում է, որ բազմամյա խոտաբույսերն օգտագործվում են սահմանված ժամկետներից ավել, 5 տարուց ավել: Ստեղծված վիճակը հանգեցնում է կերային մշակաբույսերի որակական հատկանիշների կորստի:

Գծապատկեր 2

Կերային մշակաբույսերի հիմնական տեսակների համախառն արտադրանքի փոփոխությունը 1991-2010թթ.¹



¹ 1990թ. և 1991թ. գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածության և ստացված համախառն բերքի մասին ամփոփ տվյալներ, ՀՀ վիճակագրության գլխավոր հաշվողական կենտրոն, Երևան, 1992, էջ 2-4: Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները և համախառն բերքը 2006; 2007, 2008, 2009 և 2010 թվականներին, ՀՀ ԱՎՃ, Երևան, 2007, 2008, 2009, 2010 և 2011 թթ., էջ 6-7:

Կերային առանձին մշակաբույսերի արտադրության ծավալների փոփոխության միտումների ուսումնասիրությունը վկայում է, որ կերային մշակաբույսերի ցանքատարածությունների հետ մեկտեղ զգալիորեն կրճատվել են նաև տարբեր մշակաբույսերի արտադրության ծավալները:

Հիմնական կերային մշակաբույսերի 1990-2011թթ. արտադրության ծավալների փոփոխության մասին պատկերացում են տալիս 1-ին աղյուսակի տվյալները:

Ներկայացված տվյալներից ակնհայտ է դառնում, որ զգալիորեն կրճատվել են հիմնական կերային մշակաբույսերի արտադրության ծավալները, այսպես՝ միամյա խոտաբույսերի արտադրության ծավալները 2010 թվականին 1990 թվականի նկատմամբ կրճատվել են 1.9 անգամ, այդ թվում՝ միամյա խոտաբույսերինը՝ 5.4 անգամ, ինչ վերաբերում է կերի արմատապտղին, ապա այն կրճատվել է 5 անգամ, հյութալի կերերի համար եգիպտացորենի արտադրությունը՝ 45.2 անգամ:

Կերի բազայի համալրման համար կարևոր է համարվում նաև գարու և վարսակի արտադրության ծավալների փոփոխության ուսումնասիրությունը: Գարու և վարսակի ցանքատարածությունների ու համախառն արտադրանքի մասին պատկերացում են տալիս 2-րդ աղյուսակի տվյալները:

Աղյուսակ 2

Գարու և վարսակի ցանքատարածությունները 1990-2010թթ. տվյալներով¹

	1990թ.	1991թ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.
Աշնանացան և գարնանացան գարի	56.4	65.0	63.7	65.9	66.5	68.6	61.2	67.9
Վարսակ	2.7	2.2	0.7	0.7	0.9	1.0	1.4	1.4

(հեկտար)

Աղյուսակի տվյալներից երևում է, որ ի տարբերություն վերը նշված կերային մշակաբույսերի, գարու արտադրության ծավալները որոշակիորեն ավելացել են, դրանք 2010 և 2011 թվականներին գերազանցել են 1990 թվականի մակարդակը, համապատասխանաբար՝ 8.5 և 20.4 տոկոսով:

Ցանքատարածությունների փոփոխության հետ մեկտեղ կարևոր ենք համարում գարու և վարսակի արտադրության ծավալների փոփոխության ուսումնասիրումը: Վերջինիս վերաբերյալ տվյալները ներկայացված են 3-րդ աղյուսակում:

Աղյուսակ 3

Գարու և վարսակի արտադրության ծավալների 1990-2010 թթ. տվյալները²

	1990թ.	1991թ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.
Աշնանացան և գարնանացան գարի	94.7	118.1	49.5	162.6	149.1	145.1	118.5	170.7*
Վարսակ	2.4	3.0	0.7	1.5	1.6	1.7	2.6	2.7*

(հազ. տոննա)

* Տվյալները օպերատիվ են:

Ներկայացված տվյալներից երևում է, որ գարու և վարսակի արտադրության ինտենսիվացման մակարդակը որոշակիորեն բարձրացել է, այսպես՝ 1990-1991թթ. միջինի նկատմամբ 2010-2011թթ. գարու ցանքատարածություններն ավելացել են 6.3 տոկոսով, սակայն գարու համախառն արտադրանքն ավելացել է 35.9 տոկոսով:

¹ Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 1990-1995թթ., Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 2006-2010թթ., վիճակագրական ժողովածուներ, ՀՀ ԱՎՃ, Երևան, 1996 և 2011թթ., էջ 6:

² Նույն տեղում, էջ 7:

Նշվածի հետ մեկտեղ լուրջ խնդիրներ են առաջացել նաև խոտհարքների ու արոտավայրերի արդյունավետ օգտագործման և վերականգնման գործում: Խոտհարքները (128.3 հազ. հա) և արոտավայրերը (1067.2 հազ. հա), ըստ հողային հաշվեկշռի տվյալների (2011 թ.), կազմում են գյուղատնտեսական նշանակության հողերի 57.6 տոկոսը¹:

Նշվածի հետ մեկտեղ բարձր ինքնաթեքի հետևանքով զգալիորեն կրճատվել է նաև համակցված կերերի արտադրությունը: Ներկայումս հանրապետությունում լիարժեք, հավասարակշռված, համակցված կերեր գրեթե չեն արտադրվում, դրանց «փոխարինում են» կերախառնուրդները, որոնց հիմնական բաղադրիչը ցորենի վերամշակումից առաջացած թեփն է, որի օգտագործման ժամանակ պահանջվող արդյունավետությունը չի ապահովվում:

Թվարկված և մի շարք այլ գործոնների արդյունքում, բացի անասնազվխաքանակի կրճատումից, տեղի են ունեցել նաև մթերատվության և սերնդատվության անկում, որի հետևանքով հանրապետության բնակչության անասնապահական ծագման մթերքի պահանջարկի մեծ մասը՝ տավարի մսի և կաթի-կաթնամթերքի շուրջ 15 տոկոսը, խոզի մսի շուրջ 60 տոկոսը, թռչնի մսի շուրջ 85 տոկոսը բավարարվում է ներմուծման հաշվին, որը որոշակիորեն ազդում է ոչ միայն գյուղացիական տնտեսությունների անդամների սոցիալ-տնտեսական վիճակի վրա, այլ ինչ-որ չափով վատթարացնում է նաև երկրի մակրոտնտեսական ցուցանիշները:

Կերապահության հիմնախնդրի լուծման ռազմավարական նշանակությունը պայմանավորված է նաև մեկ այլ գործոնով, որը բխում է կերապահության և անասնաբուծության ճյուղի փոխհարաբերությունից: Հայտնի է, որ լեռնային և բարձր լեռնային (այդ թվում՝ սահմանամերձ) գոտիներում գյուղական բնակչության զբաղվածության հիմնական ուղղությունն անասնապահությունն է, ուստի բազմաթիվ համայնքների ամրապնդման, անցանկալի միգրացիայի կանխման, բնակչության եկամուտների աճի տեսանկյունից կերապահովվածության հիմնախնդրի լուծումն ունի նաև ռազմավարական կարևոր նշանակություն:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ կերապահության վիճակի հետագա բարելավման և զարգացման գործում կարևորվում է արտադրատեխնիկական սպասարկումների ու մատակարարումների, ռոռզման համակարգերի, ագրոտեխնիկական սպասարկման, մարքեթինգային, գիտակրթական և խորհրդատվական, ինչպես նաև շուկայական ենթակառուցվածքների (ֆինանսական, արտադրանքի իրացման, ապահովագրական) կայուն գործունեությունը:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում կերարտադրության բարելավման հիմնական ուղիներից կարելի է առանձնացնել հետևյալները.

- Կերարտադրության բնագավառում մեքենայացման և մեքենաօգտագործման արդյունավետության մակարդակի աստիճանական բարձրացումը: Մշակության ագրոտեխնիկական կանոնների կատարման ապահովումը:
- Կերարտադրության զարգացումը և արդյունավետությունը պայմանավորող սերմնաբուծության վիճակի էական բարելավումը:
- Ագրոտեխնիկայով պահանջվող պարարտանյութերի և բուժամիջոցներով ապահովվածության մակարդակի բարձրացումը:
- Ռոռզման առկա ցանցի հնարավորությունների արդյունավետ օգտագործումը, միջտնտեսային և ներտնտեսային ռոռզման համակարգերում ջրի կորուստների կրճատումը:
- Գյուղական բնակավայրերում անասնակերերի պահպանման, վերամշակման արտադրական ենթակառուցվածքների ձևավորումը և զարգացումը:
- Անասնապահությամբ զբաղվող գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններին և տնտեսավարողներին կերարտադրության, պահպանման, կերերի վերամշակման և օգտագործման բնագավառում խորհրդատվության տրամադրման գործընթացի բարելավումը:
- Անասնապահության ճյուղում վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացումը:
- Կերարտադրության բնագավառում կոոպերացման գործընթացի խրախուսումը:

¹ Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2011 թվականի հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին, ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 13-ի №1450-Ն որոշում:

Հանրապետության կերարտադրության ճյուղի զարգացումը պայմանավորող կարևոր գործոններից է նաև գյուղական բնակավայրերում անասնապահական մթերքների վերամշակման և իրացման փոքր և միջին ձեռնարկատիրության խթանմանն ուղղված պետական աջակցությունը:

Ներկայումս փոքր և միջին ձեռնարկությունները հիմնականում կենտրոնացված են հանրապետության խոշոր քաղաքներում և Արարատյան հարթավայրում, որը խիստ բացասաբար է անդրադառնում գյուղական համայնքներում ենթակառուցվածքների զարգացման և ներդրումների ներհոսքի ավելացման վրա:

Շուկայական տնտեսության պայմաններում մրցունակության կարևորագույն գործոններից է արտադրանքի գինը: ՀՀ տարբեր մարզերի համայնքներում կատարվել են ուսումնասիրություններ կերային մշակաբույսերի, մասնավորապես՝ առվույտի, կորնգանի, միամյա խոտերի, կերի արմատապտուղների վրա կատարված ծախսերի բացահայտման ուղղությամբ:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ բազմամյա խոտաբույսերից առվույտի արտադրության շահութաբերության մակարդակը, ագրոտեխնիկական պահանջների կատարման դեպքում (տվյալ տարվա ցանքի համար) կազմում է 23.5 %, իսկ հաշվի առնելով այն հանգամանքը, որ աշխատանքները հիմնականում կատարվում են արտադրողների կողմից՝ շահութաբերության մակարդակն առանց աշխատուժի վարձատրման ծախսերի կազմում է 40.9 %: Սակայն գյուղացիական տնտեսությունները, հնարավորությունների սահմանափակության պատճառով, արտադրությունը կազմակերպում են՝ չպահպանելով տեխնոլոգիական պահանջները, որն իր բացասական ազդեցությունն է ունենում բերքատվության և արտադրանքի որակի վրա: Այդ իսկ պատճառով առվույտի արտադրության փաստացի շահութաբերությունը կազմում է, համապատասխանաբար՝ 7.5 % և 25.2 %: Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ առվույտի արտադրության արդյունավետությունը բավականին բարձր է նախորդ տարիների ցանքի դեպքում (հետագա տարիներին), այն, ըստ տեխնոլոգիայի հաշվարկման, կազմում է 45.2 %, իսկ փաստացի շահութաբերությունը՝ 35.8 %:

Կորնգանի արտադրությունն առվույտի համեմատությամբ ավելի պակաս արդյունավետ է: Երկրորդ տարվա բերքի դեպքում համապատասխան տեխնոլոգիայով մշակությունից շահութաբերության մակարդակը կազմում է 16.7 %, փաստացիի 6.8 %-ի դիմաց, իսկ աշխատուժի փոխհատուցման ծախսերը չհաշվարկելու պայմաններում՝ համապատասխանաբար՝ 41.5 և 31.9 %:

Այլ է պատկերը նախորդ տարիների ցանքի ժամանակ: Այս դեպքում շահութաբերության մակարդակը տեխնոլոգիական պահանջները պահպանելու դեպքում կազմում է 93.6, փաստացի 75.2 %-ի դիմաց:

Կերի նպատակով գարին օգտագործվում է բավականին մեծ ծավալներով, և արդյունավետությունը գնահատվել է ջրովի և անջրդի պայմաններում աճեցնելու դեպքում: Շահութաբերության մակարդակը բնականաբար ավելի բարձր է ջրովի պայմաններում արտադրություն կազմակերպելու ժամանակ, այն տեխնոլոգիական պահանջները կիրառելու դեպքում կազմում է 37.0 %՝ անջրդի պայմաններում արտադրության 29.2 %-ի դիմաց:


Հատկանշական է, որ միամյա խոտերից վիկ + վարսակ մշակելու դեպքում արդյունավետությունը բավականին բարձր է: Հարկ ենք համարում նշել, որ թեև հանրապետությունում գյուղացիական տնտեսություններից քչերն են մշակում վիկ + վարսակ կերային մշակաբույսը, սակայն այս դեպքում արդյունավետությունը ջրովի պայմաններում կազմում է (ըստ տեխնոլոգիայի հաշվարկման դեպքում) 45.1 %, փաստացին՝ 38.0 %, իսկ անջրդի պայմաններում՝ համապատասխանաբար՝ 42.6 և 34.5 %:

Կերային մշակաբույսերից կերի արմատապտուղները մշակվում են համեմատաբար փոքր տարածքների վրա, սակայն բերքատվության շնորհիվ ապահովում են բարձր արդյունավետություն: Տեխնոլոգիական պահանջները կիրառելու դեպքում շահութաբերության մակարդակը կազմում է 136.3 % (դա պայմանավորված է կերի արմատապտղի բարձր բերքատվությամբ), մինչդեռ փաստացի շահութաբերությունը, ըստ ուսումնասիրությունների, 80.3 % է, որը նույնպես վկայում է տվյալ մշակաբույսի արտադրության արդյունավետության մասին:

Ընդհանուր առմամբ կերային մշակաբույսերը շուկայում ձևավորված գների պայմաններում ապահովում են որոշակի շահութաբերություն, ծախսերը փոխհատուցվում են, և արտադրական գործունեությունը այս ոլորտում արդյունավետ է: Վերջին տարիներին կերային մշակաբույսերի միավորի գները որոշակիորեն տատանվում են (գծապատկեր 3):

Գծապատկեր 3

Կերային մշակաբույսերի գների փոփոխությունը 2006-2011թթ.



Գծապատկերից երևում է, որ ներկայացված ժամանակահատվածի 2009-2011թթ. հատվածում գարու գինը զգալիորեն բարձրացել է, բարձրացել են նաև բազմանյա խոտաբույսերի գները:

Կերերի արտադրության հիմնահարցի լուծումն ինքնանպատակ չէ, քանի որ դրանով է պայմանավորված անասնաբուծական բոլոր ճյուղերի կայուն և արդյունավետ զարգացումը: Հետևաբար հանրապետությունում կերապահովվածության հետագա զարգացման նպատակով առաջարկվում է մշակել և իրականացնել պետական համալիր ծրագիր:

ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

ԼԻԱՆԱ ԱՉԱՏՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՇՈՐԱՅՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գյուղատնտեսությունը հանրապետության տնտեսության առաջատար ոլորտներից է, որի տեսակարար կշիռը երկրի համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ) վերջին հինգ տարիների տվյալներով, միջինը, կազմել է 17.8, իսկ գյուղատնտեսական սթրեքի (հումքի) վերամշակող արդյունաբերության հետ մեկտեղ՝ 22.9 տոկոս: Գյուղատնտեսությանը բաժին է ընկնում հանրապետության ընդհանուր զբաղվածների 45,4 տոկոսը: Այդուհանդերձ գյուղատնտեսության արտադրական ներուժի օգտագործման մակարդակը դեռևս բավականին ցածր է, որի հիմնական պատճառներից մեկը գյուղացիական տնտեսությունների փոքր